# Դեպի Ճապոնիա ուղևորության մասին հայ կին ճանապարհորդի գրքի թվայնացումը

Մայիսի 16-ին դեսպան Յամադան այցելել է Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)՝ նշելու տկն. Հեղինե Մելիք-Հայկազյանի «Մի պտույտ Ճապոնում» գրքի (հրատարակվել է 1905թ.) թվայնացումը ՀԱՀ-ի թվային գրադարանում:

Գրքի հրատարակման տարեթիվը՝ 1905, ցույց է տալիս, որ Ճապոնիայի և ժամանակակից Հայաստանի միջև հարաբերությունների սկիզբը դրվել է ավելի վաղ, քան ենթադրվում էր: Այս փաստը կարևոր բացահայտում կարելի է համարել  երկու երկրների միջև հարաբերությունների պատմության մեջ:

Այդ օրը տկն. Աննա Վարդանյանը, ով բացահայտել է այդ գրքի գոյությունը, դասախոսություն կարդաց, իսկ ՀՀ Ազգային ժողովի Հայաստան-Ճապոնիա բարեկամական խմբի ղեկավար պրն. Էդգար Առաքելյանը, ՀԱՀ-ի թվային գրադարանի տնօրեն պրն. Մերուժան Կարապետյանը, ճապոնագետ պրն. Արծվի Բախչինյանը, հայ գրող և բանաստեղծ տկն. Արմենուհի Սիսյանը հանդես եկան ողջույնի խոսքով:



**Դեսպան Յամադան տկն. Վարդանյանի և պրն. Առաքելյանի հետ**




**Զրույց մասնակիցների հետ**



**Դեսպանը ծանոթացավ ճապոնական հեքիաթների հայերեն հրատարակությանը**



**Զրույց տկն. Սիսյանի հետ**



Դեսպան Յամադան տկն. Վարդանյանի և պրն. Կարապետյանի հետ



Ճապոնիա-Հայաստան հարաբերություններում ներգրավված անձանց հետ խմբային լուսանկար